

10644



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Տիգրան Գաբրիելյան



« 01 » 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 199 - 24

Նախաձեռնող՝

Գործունեությունը՝

«ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, Նորափոռ, Սարալանջ փ., նրբ. 1, փ.1

Նոյեմբերյան համայնքի Բազրատաշեն
բնակավայրի N 1 դպրոցի կառուցում

Տավուշի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 199 - 24

«01» հոկտեմբեր 2024թ.

Նոյեմբերյան համայնքի Բագրատաշեն բնակավայրի N 1 դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Տավուշի մարզ, Բագրատաշեն բնակավայր

Ներածական մաս. «ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ն նախատեսում է Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Բագրատաշեն բնակավայրի 6-րդ փողոց 15 հասցեում կառուցել N 1 դպրոցը: Ծրագիրն իրականացվելու է ՀՀ կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 09042013-11-0021, ծածկագիրը՝ 11-016-0040-0017 և Նոյեմբերյան համայնքի ղեկավարի կողմից տրամադրված N 180 /տրված՝ 07.04.2024թ./ նախագծման թույլտվությունը:

Հողամասերի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Ֆիզիկատերերաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներատերերաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել 15 մետր և ավելի խորություններում: Դպրոցի տարածքում առկա են եղևնիներ, որոնք պահպանվելու են:

Նկարագրական մաս. Նախագծվող դպրոցի հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 18000 մ²: Դպրոցը նախատեսվում է մինչև 432 աշակերտի համար: Դպրոցն ունենալու է ներքին բակ՝ դասարանների լուսավորություն ապահովելու և լուսուցիչ ռեկրեացիոն գոտի ստեղծելու համար: Նախատեսվում են տարբեր տարիքային խմբերի համար դասասենյակներ, մասնագիտացված դասասենյակներ՝ լսողաանոթաբերող



նախադպրոցական դասարան, գրադարան ու համակարգչային տեխնիկայի կաբինետ, ուսուցչանոց-մեթոդկաբինետ, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներ՝ իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետ, բժշկի սենյակ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սպորտդահլիճ՝ կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, հանդիսությունների դահլիճ, ճաշարան և խոհանոց, ինչպես նաև 3 սանհանգույց և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամների համար: Մուտքային գոտուն կից տեղակայված են հաշմանդամների համար նախատեսված վերելակ, ծնողների սպասարահ, ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոն:

Նախագիծը մշակված է ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» և ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» նորմերին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից մշակվել է համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ: Կառուցվելու է կաթսայատուն, սեպտիկ հոր, ֆուտբոլի ու բասկետբոլ-վոլեյբոլի դաշտեր: Բոլոր մասնաշենքերի տանիքները լինելու են երկթեք, ծածկերը՝ միաձույլ երկաթ-բետոնե, հիմքերը՝ ժայավենային: Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել ինչպես դիտարկվող տարածքի հատակագծի երկրաչափական ուրվագիծը, դիտարկվող և հարակից տարածքների գոյություն ունեցող կառուցապատումները, տեղանքի ռելիեֆային առանձնահատկություններն, այնպես էլ պատվիրատուի պահանջները: Դպրոցի կառուցապատման հատակագծային լուծումներում ներառվել են տարրական, միջին և ավագ դպրոցների հոսքերը, սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճները, ադմինիստրատիվ մասնաշենքերը, նոր կաթսայատունը, բացօթյա մարզահրապարակը և խաղահրապարակ: Շենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, հրշեջ-փրկարարական մեքենաների մոտեցման ուղիներով: Դպրոցի կոնստրուկտիվ համակարգը նախատեսված է երկաթ-բետոնե հիմնակմախքով: Էներգախնայողությունը և էներգաարդյունավետությունը բարձրացնելու համար նախատեսվում է արևային կայանի տեղադրում դպրոցի տանիքում՝ 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ: Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան լիցենզիա ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խտանման աշխատանքները:

Դպրոցի նախագծում հաշվի են առնված հրդեհային ազդարարման և տեսահսկման մասեր, ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները՝ տրամադրված տեխնիկական պայմանների համաձայն շինարարական նորմերին համապատասխան: Հաշմանդամների և ընկերության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար կառուցվելու են համապատասխան



սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ, վերելակ, ինչպես նաև հաշմադամություն ունեցող անձանց համար նախատեսված սանհանգույցներ:

Նախատեսվող դպրոցի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 18000 մ²
- դպրոցի կառուցապատման մակերես՝ 3485 մ²
- կանաչապատման մակերես՝ 4550 մ²
- մարզահրապարակ՝ 1650 մ²:

Շինարարության ընթացքում իրականացվելու են 8680 մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 2022.84 մ³ օգտագործվելու է հետլիցքի համար: Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է բուսահող՝ կանաչապատման աշխատանքերի համար, և ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ՝ 7740 մ³ ծավալով՝ ներառյալ քանդման ժամանակ առաջացած շինադրը և կոշտ կենցաղային թափոններ՝ 23760 կգ/տարի: Առաջացած թափոնները կտեղափոխվեն աղբահավաք ծառայության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Նոր դպրոցի կառուցման ավարտից հետո կքանդվի դպրոցի հին շենքը, որից հետո կիրականացվի բարեկարգման աշխատանքները:

Ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է շինարարության և շահագործման փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներ, ինչպես նաև մոնիթորինգի իրականացման գործողություններ՝ ստուգելու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը նախատեսվող մեղմացնող միջոցառումներին:

Պարճառարանական մաս. Դպրոցի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում: Բարեկարգման և կանաչապատ նախագծի համաձայն կիրականացվի 4550 մ² մակերեսով կանաչ գոտի: Տնկվելու են նոր ծառեր՝ տույա և եղևնի, կիրականացվի սիզամարգի ցանքս: Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ոռոգման ներքին ցանցի միջոցով, որը կմիացվի ընհանուր ոռոգման համակարգին:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած նոսր տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր,



- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ կահավորված խլացուցիչներով:

Դպրոցի կառուցման ընթացքում շինհրապարակում և շինհրապարակի հարևանությամբ նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO_x) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կաչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Եզրափակիչ մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային լուսմներն իրականացվել են Բագրատաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Դպրոցի կառուցումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննության ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, անցկացված հանրային լուսմներում բարձրացված հարցերի պարզաբանումները ներառվել են լրամշակված հաշվետվության մեջ: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ, կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Դպրոցի շինարարության ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
2. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել Նոյեմբերյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված նախագծին համապատասխան:



3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Նոյեմբերյան համայնքի հետ համաձայնեցված:
4. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Բագրատաշեն բնակավայրի N 1 դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝



Սուսաննա Անտոնյան